զարա մի քան զտուն. եւ չորս կողմն փորած
էր իբրեւ զգերեզման նեղ, որ եւ զիր կայր
հռոմի, զոր մեք ոչ կարացաք կարդալ: Եւ
այլ առաջ գնացեալ երկու երեք մաղարայ ալ 120
տեսաք. եւ փորած էր մէջն պատերուն, որք
էին աղօթատեղիք սուրբ ճգնաւորաց. եւ էր
բազում խորաձոր գետնափոր ծերպ եւ այր.
ամէն տեղիս աղօթեալ եւ երկրպագեալ՝ դար-
ձաք ի տուն: Կային եւ այլ բազում վանորայք, 125
բայց ոչ կարացաք ժամանել, զի օրն տարա-
ժամեալ էր:

SANTA CROCE IN GERUSALEMME

Եւ երկրորդ օրն գնացաք ի Սանթա Գրօչ,
որ է Սուրբ Խաչ. եւ անդ է սուրբ Խաչա-
փայտն. եւ է քաղքէն ի դուրս. զոր մտեալ ի 130
ներս, տեսաք զարմանալի շինուածս. եւ էր
յոյժ փառաւոր եւ մեծ. եւ յաւադ խորանն էր
պահած Խաչափայտն, ի բարձր տեղոջ. եւ
բոլորն նկարած էր զամենայն պատմութիւնս,
թէ ո՛րպէս գնաց Հեղինէ յԵրուսաղէմ. եւ 135
յորժամ մերձեցաւ ի մեծն Հռոմ, նա որդին
Կոստանդիանոս ել ընդ առաջ նորա բազում
քահանայիւք եւ յոքնախումբ ժողովրդովք,
այլ եւ շատ հեծելազօրօք. եւ ինքն զգեցեալ
ծիրանիս ականակուռ անդին պճնեալ թագ ի 140
գլուխ, հեծեալ ի սպիտակ ձին ոսկիակազմ
սանձիւք եւ ակամբ մարգարտովք շարեալ
զանդանաւանդօք, խնկօք եւ մոմեղինօք եւ

123 յայր: — 143 զանդանաւանտօք: